**1915թ. Հայոց ցեղասպանությունը. պատմության և պատմագրության հարցեր (հոդվածների ժողովածու)** (պատ. խմբագիր Ռ.Սաֆրաստյան). Երևան, 1995, 134 էջ

Առաջաբանի հեղինակներ Ժիրայր Լիպարիտյանը և Ռուբեն Սաֆրաստյանը, անդրադառնալով հեղինակների նպատակներին և նրանց ուսումնասիրությունների բնույթին, մասնավորապես նշում են. «Անցած շուրջ երեք տասնամյակների ընթացքում Հայաստանի գիտնականներն ընդհանուր առմամբ ձևակերպեցին ցեղասպանության պատմության լավ հիմնավորված և սկզբնաղբյուրների վրա հիմնված կոնցեպցիան, որը խարսխվում է Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության նախադրյալների ու պատճառների, նախապատրաստման և իրականացման, ինքնապաշտպանական կռիվների, միջազգային հասարակական կարծիքի, որոշ մեծ տերությունների, ինչպես նաև մի շարք այլ խնդիրների ուսումնասիրությունների վրա»:

Ժողովածուում զետեղված ուսումնասիրությունների հեղինակներն առանձնակի նշանակություն են տալիս ցեղասպանությանն առնչվող աղբյուրներին: Սա, մասնավորապես, վերաբերում է ակադեմիկոս Մ.Ներսիսյանի «Արևմտահայերի ցեղասպանությունը ըստ գերմանական և թուրքական աղբյուրների» հոդվածին, որի մասին ասված է. «Մ.Ներսիսյանի հոդվածի գլխավոր նպատակն է՝ հենվելով հենց թուրքական, ինչպես նաև Օսմանյան կայսրության դաշնակից Գերմանիայի պաշտոնական փաստաթղթերի վրա, հերքել ժխտման կոնցեպցիան, որը տարիներ շարունակ պահպանում է իր իշխող դիրքը թուրքական պատմագրության մեջ»:

Վ.Միքայելյանի «Հայոց ցեղասպանությունը գերմանացի դիվանագետների հաղորդագրություններում» հոդվածի մասին ասված է. «Պրոֆեսոր Վ.Միքայելյանի հոդվածի գլխավոր արժանիքն այն է, որ այստեղ դի մի են բերված գերմանական արխիվներում նրա երկարատև աշխատանքի արդյունքները: Օգտագործված նյութը հիմնականում առաջին անգամ է մտնում գիտական շրջանառության մեջ: Հոդվածում ցույց է տրվում Հայոց ցեղասպանության ժխտման կոնցեպցիայի գիտական սնանկությունը, ինչպես նաև մատնանշվում է Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման քաղաքական և հոգեբանական անպատակահարմարությունը հենց Թուրքիայի ներկա վարչակարգի ու ժողովրդի համար»:

Ա.Հովհաննիսյանի «Ռասիզմ և ցեղասպանություն» ակնարկի մասին առաջաբանում ասվում է, որ հեղինակը «... փորձ է կատարել մեկնաբանել հայոց ցեղասպանությունը որպես ռասիզմի գաղափարախոսության արտացոլում և հետևանք»:

Ստ.Ստեփանյանի «Հայերի ցեղասպանությունը և կայզերական Գերմանիայի մեղսակցությունը» հոդվածի մասին նշվում է. «Հոդվածում քննության է առնվում կայզերական Գերմանիայի դիրքորոշումը, որը բնութագրվում է որպես երիտթուրքական կառավարության հանցավոր քաղաքականության հովանավորություն և մեղսակցություն: Ցավոք, հայ պատմաբանները դեռևս նման համակողմանի ուսումնասիրության չեն ենթարկել Մեծ տերությունների դիրքորոշումը 1915թ. եղեռնի նկատմամբ»:

Պրոֆեսոր Ա.Համբարյանի հոդվածը վերաբերում է 1915թ. Վանի ինքնապաշտպանական հերոսամարտին: Դոկտոր Ռուբեն Սահակյանը «Հայերի ցեղասպանության արտասահմանյան պատմագրությունը» հոդվածում, վերլուծելով ինչպես թուրքական, այնպես էլ անգլիական և ֆրանսիական պատմագրության ներկայացուցիչների աշխատությունները, հանգում է այն եզրակացության, որ ժամանակակից պատմական գիտության տեսանկյունից Հայոց ցեղասպանության ժխտումը չունի որևէ լուրջ հիմնավորում: Այս առումով կարևոր է հեղինակի այն պնդումը, որ թուրքական պատմագրության մեջ արդեն իսկ նախանշվում է Հայոց ցեղասպանության փաստը ճանաչելու միտումը:

Հետաքրքրական ուսումնասիրություն է պրոֆ. Ն.Հովհաննիսյանի «Արաբական պատմագրությունը Հայոց ցեղասպանության մասին» հոդվածը: Հեղինակը, գիտական շրջանառության մեջ դնելով արաբ

գիտնականների աշխատությունները, կարևորում է Հայոց ցեղասպանության փաստի գնահատման խնդիրը Օսմանյան կայսրության մեջ մեկ այլ ճնշված ժողովրդի՝ արաբների կողմից: Արաբ պատմաբանները, լինելով մահմեդական ժողովուրդ, այսուհանդերձ, անվերապահորեն քննադատում են երիտթուրքերի կողմից իրականացված ոճրագործությունը հայերի նկատմամբ:

Ն.Հովհաննիսյանը եզրակացնում է. «Արաբ հեղինակները հայտարարում են, որ այս ցեղասպանությունը հանցանք է ոչ միայն հայերի, այլև համայն մարդկության դեմ: Հայոց ցեղասպանությունը նրանք համարում են «20-րդ դարի պատմության սև էջ», որը դեռ չի ունեցել իր Նյուրնբերգը»:

## Ի.Ա.ԱՐԱԲՅԱՆ, Ցեղասպանությունը և ատժելիությունը

**Երևան, «Մխիթար Գոշ» հրատ., 1995, 54 էջ**

Գրքույկը հրատարակվել է Հայաստանի իրավագետների և քաղաքագետների կենտրոնի որոշմամբ:

Հեղինակը համակողմանիորեն տվել է ցեղասպանության երևույթի բնորոշումը միջազգային համապատասխան փաստաթղթերի հիման վրա. «Գենոցիդը ծայրահեղ վայրենի, բարբարոսական գործողություններ ամբողջությունն է,որ կատարվում է որևէ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խումբ լրիվ կամ մասնակիորեն ոչնչացնելու դիտավորությամբ»:

Այս դիտակետից գրքույկում քննության են առնվում Հայոց ցեղասպանության նախապատրաստման և իրականացման հարցերը՝ հասնելով մինչև մեր օրերը, որոնք որակվում են իբրև ցեղասպանության զանազան եղանակներ:

Անդրադառնալով Բաքվի կոտորածներին, հեղինակը վկայակոչում է շախմատի աշխարհի չեմպիոն Գար-